



# Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 78 January / ԹԻՒ 78 ՅՈՒՆՈՒԱՐ 2024

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND



**Բշ. 1 Յունուար** – Գեղեցիկ սովորություն ունի մեր եկեղեցին տարին սկսելու աղօթքով եւ Աստուծոյ փառք տալով: Աւանդութիւն դարձած է արդէն որ այսօր տեղի ունենայ նաեւ նուրի օրհնութիւն: Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք Նաճարեան Առաջնորդ Սրբազան Հայրը մատուցեց եպիսկոպոսական Պատարագ, որուն մասնակցեցան Քահանայ հայրերը, սակաւագաց դասը եւ Լուսաւորիչ երգչախումբը, ղեկավարութեամբ Վարդան Սարկաւազ Էլմասեանի: Սրբազան հօր յաւուր պատշաճի քարոզէն ետք, տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք, սովորութիւն մը որ կը կատարուի բոլոր եկեղեցիներուն մէջ, ապա՝ նուրի օրհնութիւն: Սրբազան հօր քարոզին բնաբանն էր

**«Փառք Քեզ Աստուած փառք Քեզ,  
Յաղագս ամենայնի Տէր, փառք Քեզ»**

Սրբազան հայրը մեծապէս գնահատեց հաւատացեալները, որոնք մեծաթիւ ներկայութիւն էին եկեղեցւոյ մէջ եւ որոնք եկած էին փառք տալու Բարձրեալին եւ շնորհակալութիւն յայտնելու Անոր, բոլոր բարիքներուն համար որ Ան շնորհած էր անցնող տարուան ընթացքին:

Անդրադառնալով մարդ արարածի իւրայատկութեան, Սրբազանը մատնանշեց որ մարդը գլուխ գործոցն է Աստուծոյ ստեղծագործութեանց եւ մարդուն շնորհուած կեանքը Աստուածային Ընծայ է, որուն համար նաեւ փառք կու տանք Իրեն:

Անդրադառնալով մարդու գոյութեան իմաստին, Սրբազանը յստակացուց որ մարդ աշխարհ չէ եկած միայն ապրելու կամ շարունակականութիւն ապահովելու այլ ՄԱՍՆԱԿԻՑ դառնալու կեանքին, որովհետեւ Աստուած զինք ընտրած է որպէս իր ԳՈՐԾԱԿԻՅՐ, կեանքին ԱՂԸ: Սրբազանը բացատրեց նաեւ նուր օրհնելու իմաստը: Նուրը, խաղողի եւ ծիրանի կողքին, սրբագործուած պտուղ է, որովհետեւ հայ մարդու արդար քրտինքով աճած պտուղ է: Նուրը կը խորհրդանշէ Աստուծոյ մարդկութեան տուած բազմաբնոյթ շնորհները, որոնք նման են նոան հատիկներուն, իւրաքանչիւրը բաժանուած թաղանդով մը բայց պինդ կպած իրարու: Սա խորհրդանիշն է Քրիստոսի սիրով հանուր աշխարհի քրիստոնէաներու իրարու հետ հիւսուած ըլլալուն, թէեւ իրարմէ տարբեր, բայց ոչ իրարմէ բաժանուած:

Յաւարտ Պատարագի, օրհնուած նուրերը բաժնուեցան հաւատացեալներուն:



**Ուրբ., 5 Յունուար** – Ըստ ընկալեալ աւանդութեան, Սրբազան հայրը կը մատուցէ Ճրագալոյցի Պատարագը Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Այս տարի եւս այդ սովորութիւնը յարգուեցաւ: Մանրամասնութեանց մասին տես Ծխական Լուրերու Ս. Երրորդութիւն Եկեղեցի բաժինին մէջ:



**Ուրբ., 5 Յունուար** – Խթման Սուրբ Գիշերին Քրիստոսի Ծնունդը կ'աւետէ Արմենիա Չայն ռատիոկայանը գործադրութեան դնելով յատուկ յայտագիր մը երեկոյեան ժամը 7-էն մինչեւ կէս գիշեր: Յայտագիրը ուղիղ եթեր հեռասփռուեցաւ նաեւ Տէլսպուլի միջոցաւ:

Արմենիա Չայնի տնօրէնութեան առաջակին ընդառաջելով, Սրբազան Հայրը նախօրօք արձանագրուած տեսերիզով մը տուաւ իր Ս Ծննդեան պատգամը: Իրենց Պատգամը տուին նաեւ Հայկական երեք կուսակցութիւններու եւ զանազան միութիւններու ներկայացուցիչները: Յայտագրի գրեթէ աւարտին, ՀՕՄ-ի անդամուհիները գիշերուան ընթացքին դուռ-դուռ պտտելով, Ուիլուպիի շրջանին մէջ աւետեցին Քրիստոսի Ս. Ծնունդը, ապա, ուշ գիշերին վերադարձան բատիօծամ եւ Տէր Միւռոնի եւ երիտասարդներու ընկերակցութեամբ «Խորհուրդ Մեծ» ով ունկնդիրներուն աւետեցին հրաշափառ ծնունդն Քրիստոսի:

Իր շահեկանութեան համար, ստորեւ կը հրապարակենք Սրբազան հօր պատգամը.

«Միրելի Աւստրալահայ Համայնքի անդամներ,

Նախ թոյլ տուէք շնորհաւորել Արմենիամետիայի բոլոր աշխատողները, տարուան ընթացքին իրենց տարած անդուլ եւ անդադար աշխատանքին համար, լուրեր փոխանցելու մեր բոլորին, մեզ տեղեակ պահելու համար մեր ազգի իրավիճակին մասին:

Միրելիներ, տարուան վերջը, անհատ թէ հաւաքականութիւն, հաշուետուութիւն կը կատարենք անցած տարուան մասին: Որպէս ազգ դժուար, շատ դժուար տարի մը ունեցանք, պատահեցաւ այն, որուն բնաւ պատրաստ չէինք. Արցախի ամբողջական դատարկման պատրաստ չէինք...

Մեր մեծերը կ'ըսէին, թէ Հայ փոքրերուն աչքերուն մէջ միշտ ցաւ, մորմոք կայ: Այդ կոտորածին, ցեղասպանութեան պատճառած մորմոքն էր: Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ կորուստին մորմոքն էր: Աւաղ, մէկ դար ետք Արցախցին ալ ստիպողաբար դուրս պիտի նետուէր իր հայրենիքէն, նոր մորմոք դնելու անոր փոքրերուն աչքերուն մէջ...



Պահ մը հարիւր տարի ետ երթանք եւ տեսնենք թէ մեր նախնիները ինչպէ՞ս կարողացան ոտքի ելլել ամբողջ Արեւմտահայաստանը պարպելէն ետք: Ի՞նչ աննկուն ոգի, ի՞նչ աննահանջ, անկոտորում կամք էր պէտք, որպէսզի կարենային յաղթահարել կորուստն ու պարտուողական իրավիճակը, քաջ գիտնալով որ պարտուողականութեան հետ մեր ազգը չէր համակերպեր, չէր համաձայնէր: Անոնք մեզ եւ սերունդներ դաստիարակեցին պահանջատէրը դառնալու մեր իրաւունքներուն: Հիմա բոլորս, ներառեալ Արցախի մեր հարազատները, աւելի լաւ կը հասկնանք այն վիշտը, որ մեր ցեղասպանութեան ենթարկուած նախնիները ապրեցան, երբ կորսնցուցին Արեւմտահայաստանն ու Կիլիկիան:

Այո, այսօր տխուր ենք, մորմոքած սրտով կը դիմաւորենք նոր տարին, բայց մենք զմեզ պիտի չկորսնցնենք, եւ զէնքերը վար պիտի չդնենք երբեք, օրինակ վերցնելով մեր նախնիներէն: Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ դատին վրայ պիտի աւելցնենք Արցախի հարցը, Արցախի դատը: Աւելի՛ պիտի պայքարինք: Եթէ մինչեւ օրս կը փորձէինք հոգեկան, նիւթական օժանդակութեամբ նեցուկ կանգնիլ Արցախին, հիմա քաղաքական օգնութիւն պիտի տանք անոր, եւ մեր միւս օժանդակութիւնները պիտի հարիւրապատկենք:



Սակայն, նախ պետք է ուսքի կանգնի Արցախցին: Պիտի դիմանայ: Գոյամարտ է: Իսկ գոյամարտը կրնայ յաջողիլ երբ ապրո՞ղ կայ: Մենք բոլորս յոյս պիտի տանք մեր Արցախցի եղբայրներուն ու քոյրերուն, որ հայրենի հողին վրայ իրենք պիտի կարենան դիմակայել այսօրուան դժուարութիւնները եւ մենք իրենց կողքին ենք կանգնած: Սահմանները կը փոխուին սիրելիներ, նոյնը չեն մնար, սակայն կարելորդ յոյսը չմեռնի: Մեր եւ Արցախցու յոյսը ՊԻՏԻ ՉՄԵՌՆԻ:

Հող, հայրենիք, հարւաւոր հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւններ կորսնցնելը դիրիին չէ: Տակաւին դիրիին չէ այդ լեռները կորսնցնելը, որոնց վրայ մեր նախնիքը դարերով ստեղծագործեցին եւ վերջին 30-է աւելի տարիներուն մեր քաջորդիները արին թափեցին եւ, նման մեր նախնիներուն, սրբացուցին ամեն մէկ թիզ հողը, քարն ու ժայռը:

Այսօր տխուր ենք, բայց յուսահատ, վիատած եւ ընկճուած պիտի չըլլանք: Մենք կը հաւատանք յարութեան, մենք կը հաւատանք կեանքին եւ անո՛ր գաղափարախօսութեան: Հետեւաբար, իմ անկեղծ մաղթանքս է բոլորին, որ սրբենք մեր արցունքները, մէկդի դնենք մեր վիշտերը եւ սոթտենք մեր թելերը եւ գործի լծուինք: Տեղեակ եմ որ տարբեր կազմակերպութիւններ, իւրաքանչիւրը իր կարելիութեանց սահմանին մէջ, կը փորձէ հասնիլ Արցախին:



Շարունակե՛նք այդ: Իսկ սփիւռքի պայմաններուն մէջ, այստեղ՝ Աւստրալիոյ պայմաններուն մէջ, մեր մեծ պայքարը մեր գոյատեւելուն ի խնդիր մեր տանելիք պայքարն է: Գոյութեան պայքարը կը սկսի տունէն, կը սկսի դպրոցէն, կը սկսի եկեղեցիէն ու ակումբէն, հոն ուր Հայ գոյութիւն ունի հոն գոյատեւման պայքարը պիտի մղուի եւ շարունակուի: Մեր լինելո՞վը միայն կրնանք հասնիլ հայրենիքին, Արցախին եւ հոն, ուր հայութիւնը մեզի պէտք ունի:

Նոր տարի է: Սուրբ Ծնունդ է: Տիրոջ ծնունդը նշելով, կը վերազինուինք բարիին եւ լոյսի յաղթանակին հաւատքով:



Սիրելիներ, խնդրելով կը խնդրեմ ձեր բոլորէն, համախմբուեցէք ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ շուրջ, բոնցքաւորուինք եւ մենք մեր դէմ չպայքարինք: Նկատի ունենանք որ ամենէն վատ հայն իսկ ամենէն լաւ թշնամիէն բարձր է: Կրնանք տարբեր գաղափարներ ունենալ, տարբեր ձեւեր՝ նոյն գաղափարին ծառայելու համար, սակայն այդ պատճառ չէ որ իրարու թշնամանանք, իրար կործանելու մասին մտածենք: Թշնամին ճիշդ այդ կ'ուզէ որ ընենք, կ'ուզէ մեզ պառակտուած տեսնել:

Հետեւաբար, հեռու մնանք այն բոլոր պառակտիչ երեւոյթներէն, համախումբ ըլլանք, իրարու սեր ունենանք, լսենք իրար, իրարու յայտնենք մեր գաղափարները եւ յարգենք դիմացինին գաղափարները, եւ ինչու չէ, համալրելով, ամբողջացնելով այդ գաղափարները, համախմբուինք միասնական գաղափարներու շուրջ եւ միասին ճամբայ ելլենք մեր նպատակներու իրագործման համար:

Նոր տարուան եւ Ս. Ծնունդի առիթներով կը մաղթեմ առողջութիւն, ուժ, կորով եւ կամք, շարունակելու համար մեր գոյութեանական պայքարը, կարենալ հասնելու համար մեր հայրենիքին, Արցախին եւ հոն ուր կարիք կայ: Աստուած ձեզի հետ ըլլայ այսօր, վաղը եւ յաւիտեան: Պայծառ յաղթանակի հաւատքով միասին աւետենք մեր Փրկչին Ծնունդը ըսելով՝

**Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ, Ձեզի, Մեզի Մեծ Աւետիս:**

**Շք., 6 Յունուար** – Խուռներամ բազմութիւն մը հաւաքուած էր Սուրբ Յարութիւն Եկեղեցի, ուր Առաջնորդ Սրբազան հայրը պիտի պատարագէր, քարոզէր եւ աւետէր Քրիստոսի Ծնունդը:

Իր իմաստալից քարոզին մէջ Սրբազանը հարց տուաւ որ ինչո՞ւ հրեշտակները աշխարհին իրար կ'անցնէին մանուկի մը համար որ պիտի ծնէր ոչ թէ պալատի մը մէջ այլ՝ գոմի մը մտուրին մէջ: Եւ ինչո՞ւ մտուրին մէջ: Որովհետեւ կը ծնէր թագաւորներու թագաւորը, որուն ծնունդին մասին մարգարէները դարեր առաջ գուշակած էին: Իսկ ինչո՞ւ թագաւորը, որ Աստուծոյ ներկայացուցիչն էր եւ գերագոյն կրօնապետը այդ մասին անտեղեակ էր, որովհետեւ ան զբաղած էր իր գահով միայն: Համեստ պայմաններու տակ ծնած արքայից արքան կատարումն էր բոլոր գուշակութեանց, որ պիտի ազատէր մարդկութիւնը եւ ճամբան ցոյց պիտի տար դէպի Աստուած:



«Քրիստոսի Ծնունդը հոգեւոր սոսնախմբութիւն մըն է, որ հոգիները կը թարմացնէ եւ կը զօրացնէ: Իսկ այդ առիթով երգուող շարականները մեզի զգալ կու տան որ մեր հոգիները կը սլանան դէպի Աստուած: Մեր հոգիները կը սլանան դէպի մեր եկեղեցիները, որոնց խորաններն ու գմբէթները քանդուած են, ըսելու համար անոնց որ մենք իրենց հետ ենք եւ Խաղաղութեան Իշխանին դրօշը մեր ձեռքին՝ կը հաւատանք Աստուածային արդարութեան, որ պիտի հաստատուի անպայման» խորհրդածեց Սրբազանը:



Ա՛յս որպէս սկզբունք, Սրբազանը ըսաւ որ Արցախի կորուստը ժամանակաւոր կորուստ է եւ մեր յիշողութենէն դուրս պիտի չգայ թէկուզ մէկ հայ իսկ չմնայ այնտեղ. այնտեղ սակայն կ'ապրին մեր նախնիները, մեր սուրբերն ու մարտիրոսները, որոնք սրբացուցած են այդ հողը, «իսկ այդպիսի սուրբ հող մը կարելի չէ ջնջել մեր հաւաքական յիշողութենէն եւ հոգիէն: Մենք հոգեպէս Արցախ ենք եւ պիտի ետ բերենք զայն» հաստատեց Սրբազանը:



Սրբազանը մաղթեց որ շուտով Հայ ժողովուրդը սրբէ իր արցունքը եւ որպէս հպարտ Քրիստոնէայ զաւակներ ուտքի կանգնի այսօր աւելի՛ եւս փոթորկոտ ու անորոշ այս աշխարհին մէջ: «Մենք կը հաւատանք որ լոյսը պիտի յաղթանակէ, մենք անով քալած ենք եւ պիտի քալենք: Կը մաղթեմ արիութիւն, քաջութիւն ձեր հաւատքն ու ուխտը վերանորոգելու համար եւ որպէս եկեղեցւոյ զաւակներ ուտքի պիտի կենանք եւ միասնաբար օգտակար պիտի հանդիսանանք մեր Հայ եղբայրներուն ու քոյրերուն, հոն ուր պէտք ունին մեզի: Կը մաղթեմ որ քրիստոնէական սիրով բռունցք դառնանք, որուն համար արիութիւն կը խնդրենք Աստուծմէ» եզրակացուց Սրբազանը:



Տեղի ունեցաւ ջրօրհնէք, կնքահայրութեամբ Պրն Ճորճ Շահինեանի:



Աւարտին, Սրբազան հայրը թափօրով գնաց Էտկարեան սրահ, ուր կատարեց տարուան առաջին տնօրինէքը: Ժողովուրդը երկիւղածութեամբ ճաշակեց օրհնուած հացը, աղը եւ ջուրը:

Քաղցր սովորութիւն է Օնունդի Պատարագէն ետք Առաջնորդարանին մէջ ընդունիլ հաւատացեալներ եւ մանաւանդ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, որուն ընթացքին Սրբազան հայրը կը շնորհաւորէ անոնց նոր տարին եւ Ս Օննդեան տօնը, մաղթելով անոնց յաջող երթ եւ իրարու հանդէպ սէր եւ յարգանք:

Յաւարտ Պատարագի, աւելի քան վաթսուն հայորդիներ, ներառեալ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ Սիտնիէն եւ Նոր Զելանտայէն, այցելեցին Առաջնորդարան, ուր հիւրընկալուեցան Սրբազան հօր, քահանայ հայրերուն եւ Թեմական Խորհուրդի անդամներուն կողմէ: Յաւուր պատշաճի եւ բարձրորակ հիւրասիրութեան արժանացան հիւրերը Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին կողմէ, որուն ժրաջան անդամուհիները ամէն առիթի նեցուկ կը հանդիսանան Առաջնորդարանին:

Սրբազան հօր բարի գալուստի խօսքէն ետք խօսք առին կազմակերպութեանց համարեա բոլոր ներկայացուցիչները: Բարեմաղթանքներուն կողքին բոլորին պատգամն էր՝ ամրապնդել միասնաբար աշխատելու ոգին եւ ճիգ չխնայել Արցախի վերատիրացման համար տարուելիք աշխատանքներուն սատար հանդիսանալուն:

Ազգային-հոգեւոր այս հաւաքը ազգային միասնականութեան խանդավառութեան ստեղծման առիթ հանդիսացաւ:



**Կիր., 7 Յունուար** – Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Պատարագին, Սրբազան հայրը հանդիսապէտեց Ընդհանուր Հոգեհանգիստին, որմէ ետք կատարուեցաւ այցելութիւն Մաքրուարի Փարքի գերեզմանատան հայկական բաժին, ուր քահանայ հայրերուն ընկերակցութեամբ ան մասնակցեցաւ հոգեհանգիստին՝ մեզմէ յաւէտ բաժնուած մեր սիրելիներուն հոգիներուն յիշատակին: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

**Գ2., 9 Յունուար** – Սրբազան հայրը նախագահեց Թեմական հերթական ժողովին: Ժողովը լսեց Սրբազան հօր մեկուկէսամսեայ գործունէութեան, ինչպէս նաեւ ժողովին առցանց միացած երեք ծուխերու քահանայ հայրերուն եւ ծխական խորհուրդներու ատենապետներուն զեկուցումները:

Ժողովը քննեց ապագայ ծրագիրներ, յարաբերական եւ ռազմավարական հարցեր արծարծելի Մայիսին գումարելի Թեմական Պատգամաւորական Ժողովին:



**Ե2., 11 Յունուար** - Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս քահանայ Համբարձումեանի, մասնակցեցաւ Ասորի Կաթողիկէ Քորեպիսկոպոս Միքայէլ Պերպարիի յուղարկաւորութեան եկեղեցւոյ արարողութեան, որ տեղի ունեցաւ St Peter Chanel, Berala. Ս. Պատարագը մատուցեց եւ թաղման կարգին նախագահեց Սիտնիի Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Անթընի Ֆիշըր Արքեպիսկոպոսը: Վախճանեալ Քորեպիսկոպոսը հիմնադիրն է Աւստրալիոյ Ասորի Կաթողիկէ եկեղեցիին:



**Կիր., 16 Յունուար** – Յաւարտ Սուրբ Պատարագին, Տէր Աւետիս Քահանան, ի դիմաց Թեմական եւ Ս. Յարութին Եկեղեցոյ Ծխական խորհուրդին, Եկեղեցականներուն եւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին, շնորհաւորեց Սրբազան հօր Ծննդեան տարեդարձը մաղթելով քաջատոյջ տարիներ եւ երկար ու բեղուն գործունէութիւն չայ եկեղեցոյ անդաստանին մէջ: Իսկ 18 Յունուարին, Բարեկեցութեան կեդրոնը եւ մեր մեծահասակ պապիկներն ու մամիկները նշեցին Սրբազան Հօր տարեդարձը: Տիկ Մարինա Չափրագեան հակիրճ խօսք առաւ եւ յանուն Կեդրոնին եւ ներկաներուն Սրբազան հօր մաղթեց առողջութիւն,

երկար կեանք եւ արդիւնալից աշխատանք Տիրոջ անդաստանին մէջ: Ապա մեր երեցները, իրենց երգերով, արտասանութիւններով եւ բարեմաղթանքներով պատուեցին Սրբազանը: Սրբազանը հատեց յատուկ կարկանդակը :



**Դշ., 17 Յունուար** – Իրենց որդիական սերն ու յարգանքը յայտնելու նպատակով, Ս Յարութին Եկեղեցոյ Ծխական Խորհուրդը ընթրիքի սեղանի մը շուրջ պատուեց Սրբազան հայրը իր տարեդարձին առիթով: Ճաշարանատէր Պրն Կարօ Սիմոնեան իր ներկայութեամբ իր յարգանքն ու սէրը յայտնեց Սրբազան հօր:



**Գշ., 18 Յունուար**– Սրբազան հայրը նախագահեց Բարեկեցութեան Խնամակալ Մարմնի ժողովին: Տնօրէնուհի Տիկին Զեփիւռ Սուրատեան տեղեկացուց որ պետութիւնը երկու տարուան համար նորոգած է դրամաշնորհի պայմանագիրը աւելցնելով նպաստին գումարը:

**Շբ., 20 Յունուար** - Առաջնորդը Նախագահեց Տիկին Մարի Շեօմէլեանի թաղման եկեղեցոյ կարգին եւ արտասանեց հանգուցեալին դամբանականը:

**Կիր. 21 Յունուար** – Սրբազանը հանդիսապէտեց Հոգեհանգստեան արարողութեան, աղօթք բարձրացուց ի մասնաւորի եկեղեցոյ ծառաներ Յակոբ Էլմասեանի եւ Քոյր Լիտիա Գալանտարեանի քաղասունքին առիթով: Ան նաեւ օրհնեց Յակոբ Էլմասեանի համար մատուցուած հոգեճաշը եւ մասնակցեցաւ Լիտիա Քրոջ յիշատակին տրուած հոգեճաշին, ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ հօր:



**Դշ., 24 Յունուար** - Սրբազան Հայրը պատարագեց Հայկական Ալեքսանտր Հանգստեան Տան մէջ: Խորանին սպասարկեցին Արժ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան եւ Տէր Աւետիս քահանայ Համբարձումեան: Բրշ. Պօղոս Սարկաւագ Քէլէշեան ընկերակցեցաւ երգեհոնով եւ կատարեց դպրաց դասի պարտականութիւնը: Սրբազան Հայրը իր պատգամին մէջ շնորհակալութիւն յայտնեց Հանգստեան Տան վարչութեան, որ այս առիթը ընձեռեց որ աւանդական դարձած տարուան առաջին Սուրբ Պատարագը մատուցուի եւ ներկայ աւագ սերունդը մասնակցի Պատարագի հոգեպարար արարողութեան, ստանայ Սուրբ Հաղորդութիւն: Սրբազան Հայրը իր աղօթքներուն մէջ յիշեց այս հաստատութեան հիմնադիր

անդամուհիները, որոնք տեսիլքը եւ կորովը ունեցած էին նման քայլ առնելու եւ յաջողութեամբ զայն պսակելու, հակառակ անոնց առջեւ ծառացած բազմաթիւ դժուարութիւններուն: Ս. Պատարագէն ետք Հանգստեան Տան վարչութիւնը հիւրասիրութեամբ պատուեց Սրբազան Հայրը, քահանայ հայրերը եւ բարեշնորհ Սարկաւագը:

**Շբ., 27 Յունուար** – Ս Սարգիսի տօնին առթիւ, Սուրբ Յարութին Եկեղեցոյ երիտասարդաց Միութիւնը (ACYA) նաւապտոյտ մը կազմակերպեց, որուն մասնակցեցան Սրբազան հայրը, Տէր Աւետիս քահանան եւ աւելի քան քառասուն երիտասարդներ: Ձեռնարկը կարելի եղաւ կազմակերպել նախաձեռնութեամբ եւ օժանդակութեամբ Տիկին Ռիթա եւ Պարոն Արման Լէփեճեանի:



**Կիր., 28 Յունուար** – Աւստրալիոյ Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներուն մէջ տօնուեցաւ Սուրբ Սարգիսի Տօնը: Սուրբ Յարութին առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ պատարագեց եւ քարոզեց հոգեւոր հովիւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը: Պատարագի աւարտին, Սրբազան հայրը հակիրճ բացատրութիւն տուաւ տօնին մասին ապա դէպի դաս հրաւիրեց բոլոր Սարգիս, Մարտիրոս եւ Սարգիսեան մականուն կրող հաւատացեալները եւ օրհնեց զանոնք: Որովհետեւ տօնը կը վերաբերի նաեւ երիտասարդութեան, Սրբազանը հրաւիրեց բոլոր երիտասարդները: Ուրախալի երեւոյթ էր որ մեծ թիւով երիտասարդներ եկեղեցի կը գտնուէին: Ապա Սրբազան հայրը, յանուն եկեղեցական դասին, թեմական եւ ծխական խորհուրդներուն եւ հաւատացեալ ժողովուրդին, շնորհաւորեց Արժանապատիւ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանը իր քահանայական ձեռնադրութեան 39րդ տարեդարձին առիթով:

Օրհնութենէն ետք, Սրբազան հայրը թափօրով առաջնորդուեցաւ բակ, ուր ուխտաւորներ նուիրած էին խաղող: Սրբազան հայրը կատարեց խաղողօրհնէքի արարողութիւն, որմէ ետք հաւատացեալները իրենց հետ տարին օրհնուած խաղողի ողկոյզներ:

Սուրբ Սարգիսի տօնին առթիւ, Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ բոլոր Սարգիս եւ Մարտիրոս անուն կրող իր ընթերցողները, անոնց մաղթելով առողջ կեանք եւ արեւշատ օրեր: Նաեւ կը շնորհաւորէ Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան հօր ձեռնադրութեան 39-ամեակը, անոր մաղթելով առողջութիւն:





## Լուրեր Ծուխերէն

# ՄԵԼՊՈՒՐՆ Սուրբ Աստուածածին Եկեղեցի

**Յունուար 1** – Մատուցուեցաւ Տարեմուտի Սուրբ Պատարագ, որուն աւարտին կատարուեցաւ նուորհնէք: Օրհնուած նուորհնէքը բաժանուեցան ներկաներուն:



**Յունուար 5** – Սուրբ Ծննդեան

Ճրագալոյցի տօնին առիթով մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագի աւարտին կատարուեցաւ տնօրհնէքի աղօթք Եկեղեցոյ կից սրահին մէջ: Ճրագալոյցի Պատարագի աւարտին, Եկեղեցոյ կից սրահին մէջ կատարուեցաւ խթումի խրախճանք Եկեղեցոյ տիկնանց միութեան կազմակերպութեամբ: Հանդիսութիւնը անցաւ լեցուն սրահով և տօնական խանդավառութեամբ:

Եկեղեցոյ կից սրահին մէջ: Ճրագալոյցի Պատարագի աւարտին, Եկեղեցոյ կից սրահին մէջ կատարուեցաւ խթումի խրախճանք Եկեղեցոյ տիկնանց միութեան կազմակերպութեամբ: Հանդիսութիւնը անցաւ լեցուն սրահով և տօնական խանդավառութեամբ:

**Յունուար 6** – Մատուցուեցաւ Սուրբ Ծննդեան Պատարագ, որու աւարտին ներկաները մասնակցեցան Ջրօրհնէքի արարողութեան: Միւռոնահամ ջուրը բաժանուեցաւ ներկաներուն: Այս Տարի Եկեղեցոյ ջրօրհնաց խաչի կնքահայրութիւնը շնորհուեցաւ Թորոս Աշնալքեանին: 8 օրեր



Եկեղեցոյ Խաչը մնաց Աշնալքեաններու ընտանիքին մօտ: Յունուար 13-ին Տէր Խաչեր քահանայ Յարութիւնեան, Եկեղեցոյ վարչութեան, դպիրներու և սարկաւազներու ուղեկցութեամբ այցելեց Թորոս Աշնալքեանի տունը եւ տնօրհնէք կատարելէն ետք Ս. Խաչը վերադարձուեցաւ Եկեղեցի:



**Յունուար 7** – Մատուցուեցաւ Սուրբ Ծննդեան Մեռելոցի Պատարագ, որու աւարտին, Տէր Խաչեր քահանան այցելեց հայկական գերեզմանատան 4 բաժիններ և կատարեց հոգեհանգստեան աղօթքներ:

**Յունուար 28** – Սուրբ և Անմահ Պատարագի աւարտին կատարուեցաւ Եկեղեցական սպասներու օրհնութիւն: Գօգօ և Օսան Չորպաճեաններ Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ նուիրեցին Ջրօրհնէքի Խաչ և Քշոցներ: Յաջորդի, Սուրբ Սարգիս Զօրավարի տօնին առիթով կատարուեցաւ Երիտասարդներու Օրհնութիւն:

**Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան**

## Ուէնթուրըթվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

**Բշ., 1 Յունուար** – Եկեղեցոյս հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Միւռոն Քահանայ Աւետիսեան մատուցեց տարուան առաջին Պատարագը, որուն ընթացքին տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք:



**Ուրբ., 5 Յունուար** – Աստուածյայտնութեան ժամերգութիւն ապա ճրագալոյցի Պատարագ: Պատարգիչն էր Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան:

Սրբազանը օրհնեց եկեղեցւոյ չորս նոր «Կնքահայրեր» յանձինս Տիկ Անի Թահմիզեանի, Տիկին Շուշան Մկրտիչեանի, Տիար Կարօ եւ Տիկին Թալին Գոյումճեաններու: Սրբազանը զանոնք պարգևատրեց յատուկ գնահատագրերով:

Ան բարձր գնահատեց երիտասարդ Գոյումճեան ամուլը կնքահայրութիւն ստանձնելու համար եւ



քաջալերեց երիտասարդները հետեւելու անոնց օրինակին:

Յաւարտ Պատարագի, Պաթմանեան սրահին մէջ Սրբազան հայրը կատարեց տարուան առաջին տնօրհնէքը, օրհնելով ջուրը, աղը եւ հացը: Տեղի ունեցաւ ընթրիք, որուն համադամ ճաշերը պատրաստեցին Տիկնանց Յանձնախումբի ժիր տիկիները:

**Շբ., 6 Յունուար** – Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Յայտնութեան տօնը նշուեցաւ եկեղեցւոյ մէջ, նախ՝ ժամերգութեամբ ապա՝ Ծննդեան Պատարագով, զոր մատուցեց Արժանապատիւ Տէր Միւռն Քահանան:

Քարոզէն ետք տեղի ունեցաւ Ջրօրհնէքի արարողութիւն: Այս տարուան կնքահայրն էր Հրակ Պետրոսեան:



**Կիր., 7 Յունուար** – Ժամերգութիւն ժամը 10-ին, ապա Տէր Միւռն պատարագեց, որուն ընթացքին ան կատարեց Նուօրհնէք: Աւելի ուշ, Բուրբուտի գերեզմանատան հայկական յուշարձանին առջեւ, Տէր հայրը կատարեց ընդհանուր հոգեհանգիստ եւ գերեզմաններու օրհնութիւն:

**Կիր 14 եւ 21 Յունուար** – Տէր Միւռն պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց:



**Դշ., 24 Յունուար** – Ս. Երրորդութիւն Եկեղեցին յիշատակեց տարուան Առաջին Պահքը՝ Սուրբ Սարգիսի Պահքը: Հաւատացեալները ներկայ եղան առաւօտեան ժամերգութեան եւ ստացան Ս. Հաղորդութիւն ձօնուած Տարուան Առաջին Պահքին, սովորութիւն մը, որ հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ եւ որ կը յիշատակուի միմիայն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կողմէ: Արարողութենէն ետք Տիկնանց Յանձնախումբը հաւատացեալներուն հրամցուց նախաճաշ:

**Կիր., 28 Յունուար** – Տէր Միւռն պատարագեց եւ քարոզեց: Երիտասարդներու Օրհնութեան Օրուան առիթով, Տէր Հայրը օրհնեց եկեղեցւոյ երիտասարդութիւնը եւ խնդրեց Տիրոջմէն որ

Ան զօրացնէ երիտասարդներուն հաւատքը եւ եկեղեցւոյ ծառայութեան ոգին:

Տեղի ունեցաւ նաեւ Խաղողօրհնէք:

**Մարի Զլէր Թորոսեան**



## ԼՈՒՐԵՐ

# ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎՇՆԷՆ

### ՍՈՒՐԲ ԾՆԴԵԱՆ և ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Յունուար 5-ին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Սուրբ Գայանէի մէջ մատուցուեցաւ Ճրագալոյցի Պատարագ, որուն մասնակցեցան Մայր Աթոռի միաբանները, Արցախի նախագահ տիար Սամուէլ Շահրամանեանը, Արցախի Հանրապետութեան պետական այրեր և ուխտաւոր հայորդիներ:

Պատարագին էր Արցախի թեմի առաջնորդ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգևոր մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի տնօրէն Գերաշնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:

Պատարագի սրբազան արարողութեան ընթացքին Վրթանէս Սրբազան իր քարոզին մէջ անդրադարձաւ Քրիստոսի Սուրբ Ծննդեան խորհուրդին ի մասնաւորի ընգծելով.

*«Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ծնունդը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ վերստին հոշակումն աստուածային Եղիցի Լոյս հրամանի...: Հայ ժողովուրդը առաջիններից մէկն ընդառաջ գնաց աստուածային ճշմարիտ Լոյսին: Ուստի Քրիստոսի բերած հոգևոր նորոգումը մենք անուանեցինք լուսաւորութիւն, մեր ազգի առաքեալներին և պաշտօնական առաջին հայրապետին անուանեցինք լուսաւորիչներ, իսկ մեզ էլ սկսեցինք համարել Լուսոյ Որդիներ»:*



Իր քարոզին մէջ Սրբազանը անդրադարձաւ նաև Արցախի կորուստին:

*«Տասնամեակներ շարունակ իր անկախութեան համար մաքառող Արցախը, պատմութեան մէջ առաջին անգամ ենթարկուեց ամբողջական հայաթափման: Աղբրեջանի կողմից յատուկ նպատակով իրագործուած իննամսեայ շրջափակման և մարդասիրական ճգնաժամի հետևանքով հիծուած մեր ժողովուրդը հերոսական դիմադրութիւն ցոյց տուեց նաև ռազմի դաշտում. ցաւօք ուժերն անհաւասար էին, իսկ Արցախը՝ մենակ»,-*նշեց պատարագիչ Սրբազանը՝ ցաւ ի սիրտ արձանագրելով, որ այս տարի տասնեակ հազարաւոր արցախցի հայորդիներ առաջին անգամ ամանորեայ և Սուրբ Ծննդեան տօները պիտի դիմաւորեն իրենց փայփայած օճախներէն հեռու:



Այս առնչութեամբ Վրթանէս Սրբազան պատգամեց հաւատացեալներուն սիրով ու ջերմութեամբ պարուրել Արցախի քոյրերն ու եղբայրները, որ անոնք նորէն սկսին հաւատալ իրենց լուսաւոր գալիքին, իսկ արցախցիները յորդորեց լեցուիլ աստուածային յոյսով և լաւատեսութեամբ, ապրիլ ու գործել Մայր Հայաստանի մէջ, որովհետև միայն այս ձևով կրնայ արթուն մնալ և իրագործուիլ վերադարձի յոյսը:

Սրբազան Հայրը, յանուն Արցախի հաւատաւոր ժողովուրդին, իր որդիական սէրն ու անկեղծ երախտագիտութիւնը յայտնեց Նորին Սրբութեան, ի հեճուկս բազմաթիւ դժուարութիւններու, անմնացորդ նուիրումով Արցախին և արցախահայութեան մշտապէս աջակցելուն համար:

Եզրակացնելով, Սրբազանը աղօթք բարձրացուց առ Աստուած հայոց երկրի և պետականութեան անսասանութեան, նահատակ քաջորդիներու հոգիներու խաղաղութեան, անյայտ կորած և գերեալ հայորդիներու շուտափոյթ վերադարձին, ինչպէս նաև այս պահուն սահմանին վրայ հսկող հայ զինուորներուն համար:

Սուրբ Պատարագի աւարտին, նախատօնակի ընթացքին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացաւ Սուրբ Խորան և վառեց Յիսուս Քրիստոսը խորհրդանշող մոմը, որուն կենսատու լոյսը բաշխուեցաւ հաւատացեալներուն:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանութիւնը հաւաքուեցաւ Վեհարանին մէջ, ուր, Վեհափառի նախագահութեամբ, կատարուեցաւ տարուան առաջին Տնօրինէքը:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՒՆ ԱՌԻԹՈՎ



Յունուար 6-ին Վեհափառ Հայրապետը Ս. Ծննդեան Պատարագը մատուցեց Երևանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ մէջ: Որպէս առընթերականներ սպասաւորեցին Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Սուշեղ եպիսկոպոս Բաբայեան ու Երևանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ հոգևոր տեսուչ Գերաշնորհ Տ. Անուշաւան եպիսկոպոս Ժամկոչեան:

Յաւարտ Պատարագի կատարուեցաւ Ջրօրինէք, կնքահայրութեամբ ծագումով շուշեցի, մոսկուայաբնակ բժիշկ, ակադեմիկոս Արամայիս Քամալովի:

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏԳԱՍԸ

**«Հիմա լոյս էր ի Տէր. ընթացէք ինչպէս լուսոյ որդիներ. քանզի լուսոյ պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը և ճշմարտութիւնը» (Եփ. 5.8-9):**



Միրելի հաւատաւոր ժողովուրդ, Այսօր, ազգս հայոց, թէև վշտակիր և հոգեխռով, սակայն հաւատքով աներեր, կամքով անկոտորում և յոյսով առլեցուն, խոնարհում է մանկացեալ Փրկչի առջև, որ բեթղեհեմեան այրից որպէս լոյս ու փրկութիւն ճառագեց ողջ աշխարհին: ... Փրկչի Ծնունդը հրաւեր է խաւարէն դէպի լոյս, դէպի Աստուած ընթանալու: ...Մեր ժողովուրդը 21-րդ դարում վերստին կրեց կորուստներ, ենթարկուեց նոր փորձութիւնների, որոնք, ցաւօք, անկարող եղանք յաղթահարելու աշխարհաքաղաքական բարդ իրադարձութիւնների, ինչպէս նաև առաքելապատուէր բարութեան, արդարութեան ու ճշմարտութեան ճանապարհից խոտորուելու պատճառով: Բարութիւնը մեզանում աղճատուեց չարութեան ու նենգութեան որովմներով, արդարութիւնն այլափոխուեց կողմնակալութեան ու հաշուեյարդարի դրսևորումներով, ճշմարտութիւնը խեղուեց ու խաթարուեց ստով ու չարահնար գործողութիւններով: Նման արատները նաև պատճառ դարձան մեր ազգի մասնատման, ուժերի ջլատման ու պարտութիւնների, նաև կորուստների մեր սրբութիւնների և արժանապատուութեան: Այսպէս, Արցախը միայնակ մնաց իրեն պատած արհաւիրքների օրերին:

Արցախցի հայորդիք եղան հալածական հայրենի բնօրրանից, աստանդական և անօթևան: Բայց Տերը, Ով Իր Ծննդեամբ փրկութիւն ու լոյս բերեց խաւարի մէջ, ցոյց է տալիս, որ Աստուծոյ հետ՝ ամէն նեղութիւն վերափոխուում է յաղթութեան, ամէն տառապանք՝ աստուածային հատուցման, ամէն դժուարութիւն՝ ուժի և զօրութեան, և անգամ մահը՝ յաւիտենութեան: Այս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ մեկտեղենք մեր ջանքերը փորձութիւնները յաղթահարելու համար և աւետարանչի խօսքերի ճշմարտութիւնը ցոլացնենք մեր կեանքում. «Եւ լոյսը խաւարի մէջ լուսաւորում է, և խաւարը նրան չնուաճեց» (Յովհ. 1.5):



Միրելի բարեպաշտ զաւակներ ի հայրենիս և ի սփիւռս, Հայրապետիս պատգամն է, որ մեր սրտերը չդարձնենք յուսահատութեան, տրտմութեան մութ ու ցուրտ անձաւներ, այլ Քրիստոսի ներկայութեամբ լուսաւորուած մտւրներ, որտեղ մանուկ Յիսուսին աստուածահաճոյ գործեր ընծայելու մղումն ու ձգտումն են թագաւորում: Արդ, ապաւինենք մարդեղացեալ Տիրոջը, ամուր մնանք հաւատքի մէջ, ամենուր լինենք բարու, սիրո և ճշմարտի առաջամարտիկներ՝ յանուն արդար ու լուսաւոր մեր կեանքի: Նախանձախնդիր լինենք հայրենի

պետութեան հօրացմանը և համախմբուենք միասին՝ մեր ողջ ներուժով կասեցնելու համար Աղբբեջանի ծաւալապաշտական նկրտումներն ու ռոնձգութիւնները: Վերացնենք արհեստականօրէն մեր մէջ ստեղծուած անջրպետները, ապրենք միմեանց հանդէպ սիրով, որ երկնային օրհնութեամբ պայծառանան հայրենական ու ազգային մեր անդաստանները, ինչպէս Աւետարանում է ասուում. «Խաւարի մէջ նստած ժողովուրդը մեծ լոյս տեսաւ. և լոյս ծագեց նրանց վրայ, որ նստում էին մահուան երկրի և ստուերների մէջ» (Մատթ. 4.16):

Սուրբ Ծննդեան և Աստուածայայտնութեան յուսաբեր խորհրդով քաջալեր՝ Հայրապետական Մեր յորդորն ենք բերում Արցախից տեղահանուած Մեր զաւակներին: Միրելիներ, դուք անօրինակ հերոսական և անընկճելի ոգով ամենայն արժանապատուութեամբ և անտրտունջ յաղթահարել և յաղթահարում էք ձեզ պատուհասած նեղութիւնները: Մեզ համար երբեք անցեալ չի դառնալու Արցախը, որը մենք շարունակելու ենք փայփայել մեր սրտում ու հոգում՝ ամենայն ջանք ի գործ դնելով արցախահայութեան իրաւունքների պաշտպանութեան համար: Մնացեք լի յոյսով՝ Աստուած ձեզ բարիքներ և օրհնութիւններ պիտի պարգևի ձեր կրած զրկանքների փոխարէն: Ձեր դժուարութիւններում դուք միայնակ չէք: Ձեզ



հետ են ի հայրենիս և ի սփիւռս հաւատաւոր ձեր եղբայրներն ու քոյրերը, ովքեր պիտի շարունակեն բոլոր հնարաւոր միջոցներով սատար ու օգնական լինել ձեզ: Միասին մենք դուրս պիտի գանք առկայ ծանր իրավիճակից և կառուցենք խաղաղ, բարօր ու ապահով ապագան մեր ժողովրդի ու հայրենիքի: Հաւատում ենք մեր նոր կեանքի արշալոյսին, քանզի խաւարը չի կարող արգելք լինել արևածագին: Առաւօտուայ լոյսի հետ, Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի հայցի համաձայն, մեր հոգիներում պիտի պայծառանայ Աստուծոյ իմանալի լոյսը, և ինչպէս Տէրն է ասում մարգարէի շուրթերով՝ «Արագ պիտի մօտենայ Իմ արդարութիւնը, և Իմ փրկութիւնը պիտի ելնի ինչպէս լոյս» (Եսայի 51.5):

Այս յուսառատութեամբ ու հաւատով, Սուրբ Ծննդեան անտիսով եղբայրական Մեր ողջոյնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Սանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանին, քոյր Եկեղեցիների հոգևոր Պետերին՝ հայցելով Փրկչի օրհնութիւնն ու զօրակցութիւնը և գահակալութեան արևշատ ու արդիւնալի տարիներ: Հայրապետական Մեր սերն ու բարեաց մաղթանքներն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու հոգևոր դասին և համայն հաւատաւոր Մեր ժողովրդին:



Սուրբ Ծննդեան շնորհաբեր այս օրը Մեր աղօթքն ենք վերառաքում առ Փրկիչ մեր Տէրը: Ով մանկացեալ Յիսուս Քրիստոս, Որդի Աստծոյ, մեր փրկութեան համար մարմնացար և աշխարհ եկար ու մարդկութեան հանդէպ անսահման սիրովդ երկնառաք շնորհների լոյսը ծագեցրիր բոլոր Քեզ հաւատացողների հոգիներում: Խաղաղութիւն ու բարօրութիւն պարգևիր աշխարհին ու մեր հայրենիքին: Ազատիր մեզ ամենայն չարից ու չարիքից, մխիթարութիւն շնորհիր պատերազմի արհաւիրքներից ու ծանր կորուստներից խոովայոյզ ու վշտակիր մեր սրտերին: Ներիր և թողութիւն շնորհիր մեզ, որպէսզի մեղքերն ու անկումները

չփակեն մեր առջև ճանապարհը մեր տեսիլքների իրագործման և ակունքները Քո անբաւ բարիքների և անսպառ ողորմութեան: Սուրբ Աջիդ խնամքի ներքոյ պահպանիր հայրենիքի սահմանները հսկող մեր քաջարի զինուորներին: Շուտափոյթ վերադարձ պարգևիր պատանդ պահուող գերեալ հայորդիներին, այլև անյայտ կորած մեր զաւակներին: Երկնային երանական հանգստութեան և լուսեղէն օթևանների արժանացրու պատերազմում զոհուած մեր հերոս նահատակներին: Թող համայն հայութեան մէջ, ինչպէս Սուրբ Ծննդեան մտւրում, շողարձակի Քո լուսաւոր ներկայութիւնը, որպէսզի Քեզանով զօրացեալ դիմակայենք բոլոր փորձութիւններին և ընթանանք դէպի յաղթական գալիքը մեր ժողովրդի՝ փառաւորելով Քեզ Հօր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,  
Ձեզ եւ մեզ մեծ անտիս**

**ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԷՐ ԱՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐՎԱՆԵԱՆԻ**



Յունուար 3-ին, ի Տէր ննջեց Մայր Աթոռի երիցագոյն հոգեւորականներէն Գերաշնորհ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեան: Սրբազան հօր յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Յունուար 7-ին. վերջին հրաժեշտի համար հանգուցեալ Սրբազանին աճիւնը դրուեցաւ Սուրբ Գայանէ վանքին մէջ, ուր Վեհափառի հանդիսապետութեամբ կատարուեցաւ եկեղեցւոյ կարգը: Աւարտին, Վեհափառ Հայրապետը իր ցաւակցական խօսքը ուղղեց Մայր Աթոռի միաբանութեան, հանգուցեալ Սրբազանին հարազատներուն և ներկայ ժողովուրդին:

Յունուար 8-ին, յընթացս Պատարագի, ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բարայեանի, կատարուեցաւ վերջին օժման կարգը:

Այնուհետև, թափօրով, Սրբազան հօր մարմինը տարուեցաւ Մայր Աթոռի միաբանական գերեզմանատուն, ուր Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Վազգէն արքեպիսկոպոս Միրզախանեանի նախագահութեամբ կատարուեցաւ հանգուցեալ Սրբազան Հօր թաղման կարգը:

## ՅՈՒՆՈՒԱՐ 13-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՐ ՄԵԿՆԵՑԱԻ ԱՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ և ԻՐԼԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐ

Նորին Սրբութիւնը հանդիպումներ ունեցաւ թեմական կառոյցներու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներու հետ՝ քննարկելու Մայր Աթոռի կողմէ իրականացուող ծրագիրները:

## ՅՈՒՆՈՒԱՐ 22-26 ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ և ԿԱԹՈՒԿ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՍՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՆԻՍՏԸ

Հռոմի մէջ գումարուած այս ժողովը Արևելեան Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիներու պաշտօնական երկխօսութեան Միջազգային Միացեալ Աստուածաբանական Յանձնախումբի 18-րդ լիագումար նիստն է, նուիրուած երկխօսութեան 20-ամեայ յոբելեանին:



Յանձնախումբի լիագումար նիստին և յոբելեանական արարողութիւններուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն իրենց մասնակցութիւնը բերին յանձնախումբի անդամներ, Արևմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ և Վատիկանի մէջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտօնական ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան և Մայր Աթոռի Միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժնի տնօրէն ու Գեորգեան հոգևոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեան:

## ԱՐՅԱԽԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Յունուար 24-ին Եւրոպական Խորհրդարանին մէջ, Պրիւքսել, տեղի ունեցաւ *«Պահպանելով Լեռնային Ղարաբաղի մշակութային և հոգևոր ժառանգութիւնը»* խորագրով խորհրդածողովը, կազմակերպուած Եւրոխորհրդարանի նախաձեռնութեամբ:

Բացման խօսքը կատարեցին Պելճիքայի ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Եւրոմիութեան մէջ Հայաստանի ներկայացուցչութեան ղեկավար Տիգրան Բալայեանը և Եւրոխորհրդարանի պատգամաւոր Միրիամ Լեքսմանը:

Ատրպեյճանի կողմէն Հայոց սրբավայրերու թիրախաւորման, պատմամշակութային արժէքներու ոչնչացման քաղաքականութեան և այդ ուղղութեամբ միջազգային հանրութեան կողմէ ձեռնարկուելիք քայլերու հրատապութեան մասին զեկուցեց Մայր Աթոռի Քարոզչական կեդրոնի տնօրէն և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան հարցերով զրասենեակի բաժնի վարիչ Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումեանը:

Հայր Սուրբը կոչ ըրաւ պաշտպանել Լեռնային Ղարաբաղի մշակութային և կրօնական ժառանգութիւնը, յարգել կրօնի, հաւատքի ազատութիւնը, որը ամրագրուած է միջազգային պայմանագրերով, ինչպէս նաև հնարաւորութիւն տալ ԵՈՒՆԵՍԿՕ-ի անկախ գնահատում կատարողներուն այցելելու տարածաշրջան և փաստագրելու մշակութային յուշարձաններու կարգավիճակը:

Խորհրդածողովին զեկույցներով հանդէս եկան նաև Եւրոպա Նոստրա մշակութային ժառանգութեան պահպանութեան միջազգային հասարակական կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Սնէսկա Քուաեդովիեզ-Միխայլովիչը, «Բնօրրան» պատմամշակութային հասարակական կազմակերպութեան Արցախի մշակութային ժառանգութեան փորձագետ Արմինէ Տիգրանեանը և Լյովենի համալսարանի Փրոֆէսոր Փիեռ տ'Արժանը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂԵՐԶԸ  
ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ**

Բանակի նուիրական օրուայ առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Հայոց բանակի հրամանատարներին ու զինուորներին և համայն մեր ժողովրդին:

Արցախեան շարժման օրերից կամաւորական ջոկատների և զինապարտների միաւորումով կազմաւորեց հայոց կանոնաւոր բանակը, որն աւելի քան երեք տասնամեակ, Արցախեան պատերազմների և Հայաստանի սահմանների Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողութիւնների ընթացքում մարտնչեց անօրինակ սխրանքներով: Բազում քաջորդիներ անմահացան՝ ընդունելով յանուն հայրենիքի նահատակութեան պատկը:



Միրելիներ, մեր տարածաշրջանում տիրող բարդ իրադրութեան մէջ առաջնային է Հայոց բանակի համակողմանի հզօրացումը: Մեզ պատած աղիտալի ողբերգութիւնների, Արցախի բռնազավթման յանդիման՝ բոլորիս ջանքերով ըստ ամենայնի պիտի սատարենք մեր բանակին, քանզի Հայոց բանակը երաշխաւորն է մեր ժողովրդի խաղաղ ու արժանապատիւ կեանքի, ապահով գալիքի ու հայոց անկախ պետականութեան: Գոհութեամբ ենք հաստատում, որ մեր հոգևոր սպասաւորները հովուական խնամքի համար եղել են և լինելու են Հայոց բանակի սպաների ու զինուորների կողքին, որպէսզի զօրացնեն ոգին մեր քաջարի մարտիկների և ամուր պահեն նրանց հաւատքն ու յոյսն առ Աստուած:

Այսօր մենք մտահոգ ենք աշխարհում առկայ լարուած ու պատերազմական իրավիճակի, մասնաւորապէս մեր հայրենիքի շուրջ ծաւալուող իրադարձութիւնների, մեր պետութեան նկատմամբ դրսևորուող նուաճողական նկրտումների պատճառով: Հաւատն ունենք, որ Աստծոյ օգնութեամբ, ուժեղ բանակով և համազգային միաբանութեամբ կարող կը լինենք դիմակայել մարտահրաւերներին և հաստատել մեր պետութեան և աշխարհասփիւռ մեր ժողովրդի լուսաւոր գալիքը:

Եռաբլուրում, հայրենիքի սրբազան հողում ամփոփուած մեր նահատակների քաջարի սխրանքը և լոյս յիշատակը թող մեզ համար դառնան սրբազան աւանդ՝ աննուազ պահելու հայրենեաց սէրը և նուիրումը, մեր ցան ու վիշտը դարձնելու ուժ ու վճռականութիւն յանուն մեր հայրենեաց շէնացման ու բարգաւաճման:

Բանակի այս նուիրական օրը աղօթում ենք յանուն հայրենիքի գոհուած հերոս հայորդիների հոգիների հանգստութեան համար և հայցում շուտափոյթ վերադարձ գերեալ հայորդիներին ու անյայտ կորածներին: Թող Տէրը խաղաղ ու անվտանգ ծառայութիւն շնորհի մեր զինուորներին ու սպաներին և Իր խնամքի ներքոյ օրհնի ու պահպանի հայրենի մեր երկիրը և աշխարհասփիւռ համայն մեր ժողովրդին այսօր և միշտ. ամէն:



**ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ  
«ԵՌԱԲԼՈՒՐ»**

Յունուար 28-ին, Հայոց բանակի օրուան առիթով, Վեհափառ հօր օրհնութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները այցելեցին «Եռաբլուր» զինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու յանուն հայրենիքի պաշտպանութեան նահատակուած հայորդիներու յիշատակին և աղօթք բարձրացնելու անոնց հոգիներու հանգստութեան համար:

